

**Խորհրդարանական լսումներ՝ «Գիտությունը՝ որպես անվտանգության եւ զարգացման հենասյուն» թեմայով**



ՀՀ Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովը փետրվարի 1-ին անցկացրեց խորհրդարանական լսումներ՝ «Գիտությունը՝ որպես անվտանգության եւ զարգացման հենասյուն» թեմայով: Քննարկման առանցքում մեկ հարց էր. ինչպե՞ս Հայաստանում զարգացնել գիտությունը եւ ի՞նչ է պետք անել այդ նպատակին հասնելու համար: Հարցի վերաբերյալ

իրենց պատկերացումները ներկայացնելու համար խորհրդարան էին այցելել գիտնականներ, պաշտոնյաներ, տարբեր ոլորտների մասնագետներ, դասախոսներ ու ուսուցիչներ:

Մինչ քննարկմանն անցնելը ներկաներն ԱԺ ԳԿՄՄԵՄ նախագահ Մխիթար Հայրապետյանի առաջարկով մեկ բուպե լույսամբ հարգեցին 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ Թուրքիայի աջակցությամբ Ադրբեջանի սանձազերծած պատերազմում զոհվածների հիշատակը:

Բացելով լսումները՝ ՀՀ ԱԺ ԳԿՄՄԵՄ մշտական հանձնաժողովի նախագահ Մխիթար Հայրապետյանը նշեց, որ նաեւ 44-օրյա պատերազմն է պատճառ դարձել այս լսումները նախաձեռնելու համար, ինչը հետագայում պետք է նպաստի ոլորտային քաղաքականության եւ ռազմավարության մշակմանը: Ըստ Բանախոսի՝ այսօր կարելու է գույքագրել համահայկական ներուժը եւ հասկանալ, թե ինչպես է այն օգտագործվելու թե՛ ոլորտների զարգացման, թե՛ անվտանգության ապահովման համակարգում:

«Չկա մի ոլորտ, որտեղ հնարավոր է առանց գիտական հենքի ապահովել զարգացում», - նշեց նա՝ հավելելով, որ վերջին պատերազմը ցույց տվեց, որ առկա են բազմաթիվ անելիքներ:

ՀՀ ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանն իր ելույթում անվտանգության ապահովման տեսանկյունից կարելու է գիտության եւ կրթության ոլորտների համատեղ զարգացումը: Ըստ նրա՝ արհեստական է այն մոտեցումը, որով փորձ է արվում տարանջատել բարձրագույն կրթությունը գիտությունից: Նախարարի դիտարկմամբ՝ այսօր լրջագույն խնդիր կա կադրերի վերարտադրության առումով. ըստ նրա՝ չի կարող զարգանալ գիտությունը, եթե չկան որակյալ կադրեր, իսկ դրա համար անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել հանրակրթությանն ու բարձրագույն կրթությանը, գործուն քայլեր ձեռնարկել գիտության ոլորտում: Նախարարի խոսքով՝ գիտության ոլորտում չկա մրցակցություն, փոխարենը կա երիտասարդ գիտնականների պակաս, ինչի պատճառը երիտասարդ կադրերի արտահոսքն է դեպի արտասահման:

Այժմ մշակման փուլում է ոլորտը կանոնակարգող օրենքի նախագիծը: «Այսպես թողնել չի կարելի», - ելույթի ավարտին կարծիք հայտնեց նախարարը:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Հակոբ Արշակյանն անդրադարձավ աշխարհի գիտատեխնիկական զարգացումներին՝ նշելով, որ այժմ նավթագազային եւ ֆինանսական կառույցների առաջընթացին փոխարինելու են եկել գիտատեխնիկական եւ բարձր տեխնոլոգիաները: Նրա խոսքով՝ աշխարհն այսօր փոխվում է շատ արագ եւ դրա հիմքում ընկած է գիտական եւ գիտատեխնիկական առաջընթացը: Այս ամենն աշխարհում հանգեցնում է անվտանգային համակարգերի կտրուկ փոփոխությունների, որոնք չտեսնելը կարող է հանգեցնել ողբերգական հետեւանքների: Նախարարը կարեւորեց առաջնահերթությունների հստակ սահմանումը, գիտության զարգացման նոր սանդղակի մշակումն ու Գիտությունների ազգային ակադեմիայի ներուժի հզորացումը, ռեսուրսների ճիշտ տեղաբաշխումը:

Նախարարը չորջանցեց նաեւ ռազմարդյունաբերության ոլորտը եւ տեղեկացրեց, որ վերջին երկու տարիներին ավելի քան 2,5 անգամ ավելացվել են գիտահետազոտական եւ փորձանախագծային աշխատանքների ու շուրջ 4 անգամ՝ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության համար նախատեսված ֆինանսական հատկացումները:

Ժամանակակից պատերազմներում հնարավոր չէ հաղթել՝ չունենալով արդիական սպառազինություն. համոզված է ՀՀ ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը: Տարիներ շարունակ ունենալով գիտություն, չենք օգտվել բանակի սպառազինությունն արդիականացնելու հնարավորությունից: Անդրադառնալով ժամանակակից զինտեխնիկային, մասնավորապես, օդուժ ունենալու հրամայականին՝ Քոչարյանն ասաց. «Չպետք է այստեղ խոսենք եւ ցրվենք, մեր անելիքները, մտորումները պետք է լինեն հստակ եւ անկեղծ: Անհրաժեշտ է վերանայել ռազմարդյունաբերական համալիրի կարողությունները, շրջվել դեպի գիտությունը»:

ԱԺ ԳԿՄՄԵՍ մշտական հանձնաժողովի փոխնախագահ Հովհաննես Հովհաննիսյանն անդրադարձավ գիտնականի դերին, անհրաժեշտ համարեց գիտության ֆինանսավորման էական ավելացումը, բնագիտական առարկաների՝ քիմիայի, ֆիզիկայի, մաթեմատիկայի եւ որոշ այլ առարկաների նկատմամբ հասարակության վերաբերմունքի փոփոխությունը: Այդ ուղղությամբ որոշակի քայլեր արվում են. մասնավորապես, նպատակ կա նաեւ հեռուստատեսային հաղորդումների միջոցով գիտության նկատմամբ հետաքրքրություն առաջացնել աշակերտների շրջանում: Հովհաննես Հովհաննիսյանը հայտնեց, որ համապատասխան նախարարության հետ ակտիվ քննարկման փուլում է ոլորտը կանոնակարգելուն ուղղված օրենսդրական նախաձեռնությունը:

ՀՀ գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանը անդրադարձավ գիտության ոլորտի ֆինանսական հատկացումներին եւ վիճակագրական տվյալներին՝ նշելով, որ 2021 թվականին պետքույն է գիտության ոլորտին հատկացվել է շուրջ 13 միլիարդ դրամ կամ 25 միլիոն ԱՄՆ դոլար: Այս տարի, սակայն, 502 մլն դրամի չափով կրճատվել է հատկացված գումարը՝ Covid-19-ով պայմանավորված:

Հայոցյանը նշեց, որ գիտության զարգացման համաշխարհային տենդենցների համաձայն այժմ ռազմարդյունաբերության ոլորտի հզորացման համար առավել վճռորոշ են դառնում թեթև և գիտատար սպառազինությունները, որոնց մշակումն ու ստեղծումը պահանջում է ունենալ զարգացած ճարտարագիտություն ու գիտություն: «Այս մրցավազքին չմասնակցելը կարող է ճակատագրական լինել հատկապես մեզ համար: Գիտության կոմիտեի նախագահի տեղեկացմամբ՝ այժմ Հայաստանում գործում են մի շարք ընկերություններ, որոնք հաջողված ծրագրեր են իրականացնում ռազմարդյունաբերության ոլորտում: Նա շեշտել է, որ ապագայի պատերազմները կարող են տրամագծորեն տարբերվել անցած պատերազմից:

Թեմայի վերաբերյալ մասնակիցներն իրենց ելույթներում խոսելով 2020 թվականի պատերազմի և դրա հետևանքների մասին՝ ընդգծեցին, որ նախկինում թույլ տրված սխալները չկրկնելու և ապագա մարտահրավերներին դիմակայելու պայմանը գիտության զարգացումն է:

Կարելուվեց բարձրագույն կրթության, պաշտպանության, տնտեսության ոլորտների փոխգործակցության անհրաժեշտությունը և տեխնոլոգիական նորարարությունների համար բարենպաստ միջավայր ձևավորելը, գիտական ու ֆինանսական ռեսուրսները համախմբելը:

Երկրի գիտատեխնիկական առաջընթացի համար հարկավոր է կենտրոնացնել ջանքերն առավել արդիական խնդիրների լուծման վրա՝ միավորելով ինտելեկտուալ ուժերը:

Մատնանշելով Հայաստանում ՏՏ ոլորտում առանձին ճյուղերի պակասն ու գիտաշխատողների թվի յոթնապատիկ նվազման փաստերը՝ առաջարկներ հնչեցին երբեմնի հզոր գիտությունը վերականգնելու, և այն օրենսդրորեն որպես առաջնահերթություն ամրագրելու վերաբերյալ:

Անդրադառնալով բուհական կրթական համակարգի արդիականացման թեմային՝ ընդգծվեց գիտության ֆինանսավորման վերանայման հարցը, անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների ապահովումը:

Հանդիպման ավարտին ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Մխիթար Հայրապետյանը պատրաստակամություն հայտնեց հանձնաժողովին կից գործող գիտության և կրթության ենթահանձնաժողովի շրջանակում կազմակերպել հանդիպումներ և քննարկել լուսմների ընթացքում ներկայացված խնդիրները:

Ի դեպ, ԱԺ լուսմների պատմության մեջ առաջին անգամ Սփյուռքի ներկայացուցիչներին ևս տեսաձայնագրությունների միջոցով ելույթներ ունենալու հնարավորություն էր ընձեռվել՝ դրանով իսկ կարելուրելով սփյուռքահայ գիտնականների հետ սերտ համագործակցությունը:

[http://www.parliament.am/news.php?cat\\_id=2&NewsID=13637&year=2021&month=02&day=01&lang=arm&enc=utf8](http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=13637&year=2021&month=02&day=01&lang=arm&enc=utf8)



## **Պետրյուզեից ֆինանսավորվում է 71 գիտական կազմակերպություն. Գիտության կոմիտեի նախագահ**

Գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանը «Գիտությունը՝ որպես անվտանգության և զարգացման հենասյուն» խորհրդարանական լսումների ժամանակ անդրադարձավ ոլորտի պետական ֆինանսավորմանը:

«Գիտական գործունեության համար 2021 թվականի պետբյուջեով նախատեսված է շուրջ 13 միլիարդ դրամ կամ 25 միլիոն դոլար: Բազային ֆինանսավորումը, որը տրամադրվում է կազմակերպություններին և բուհերի գիտական ստորաբաժանումներին, կազմում է ոլորտի բյուջեի 64.4 տոկոսը: Թեմատիկ ֆինանսավորմանը կամ մրցութային կարգով իրականացվող ծրագրերին հատկացվում է մեր բյուջեի 21.2 տոկոսը: Ծրագրերն իրականացվում են հիմնականում գրախոսությամբ ընտրված թեմաների համար:

Նպատակային ծրագրերին, որոնք ուղղված են պետության կարիքների սպասարկման համար, հատկացվում է բյուջեի 1 տոկոսը: Սակայն այս թիվը փոքր է այն պատճառով, որ դրա մեջ մտնում էր ժամանակին հատուկ փորձարարական ստրուկտուրական և գիտահետազոտական աշխատանքների բյուջեն, որը տեղափոխվել է ռազմարդյունաբերության կոմիտե: Մնացյալ մասը ծառայում է միջազգային պայմանավորվածությունների և պարտավորությունների սպասարկմանը»,- նշեց Հայոցյանը՝ հավելելով, որ կորոնավիրուսային համավարակի պատճառով կատարված վերաբաշխումների արդյունքում բյուջեն կրճատվել է 502 միլիոն դրամով:

Պետբյուջեից ֆինանսավորվում է 71 գիտական կազմակերպություն, որից 35-ը՝ ԳԱԱ կազմում են, 21-ը՝ ԿԳՄՍ նախարարության գերատեսչական պատկանելության ինստիտուտներ են, որից 12-ը բուհեր են: Պետական ծրագրերով ֆինանսավորում ստանում է 3959 գիտաշխատող, որից գիտական աստիճան ունի 63.5 տոկոսը:

## Գիտական ղեկավար պաշտոն զբաղեցնողների 48.3%-ը 65 տարեկանից բարձր տարիքի է



ՀՀ գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայրոսյանը կարևորում է գիտական ղեկավար պաշտոններում երիտասարդների ներգրավումը՝ նշելով, որ գիտական ղեկավար պաշտոն զբաղեցնողների 48.3 տոկոսը 65 տարեկանից բարձր տարիքի են: «Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ նա այս մասին ասաց «Գիտությունը՝ որպես անվտանգության եւ զարգացման հենասյուն» թեմայով խորհրդարանական լուսններում:

«Բարեփոխումների իրականացման համար նաև պետք է ընդունենք, որ համակարգում կան մի շարք խնդիրներ ու աշխատանք տանենք այդ խնդիրների լուծման ուղղությամբ: Դրանցից ամենակարևորը գիտնականների ծերացող համայնքն է: Գիտական ղեկավար պաշտոն զբաղեցնողների 48.3 տոկոսը 65 տարեկանից բարձր տարիքի են», - ասաց Հայրոսյանը:

Կոմիտեի նախագահը նկատեց, որ նրանք էլ համավարակի պայմաններում ռիսկային խումբ են համարվում, մահացության մակարդակն էլ բավականին բարձր է: «Հիմա այդ համայնքի պահպանման համար պետք է կարողանանք ներգրավել կոմպետենտ երիտասարդներ, միայն երիտասարդների թվակազմը բավարար չէ: Մեզ անհրաժեշտ է նաև, որ համապատասխան կոմպետենցիա ունեցող երիտասարդ գիտնականներ գան, որպեսզի այդ ավանդույթները, դպրոցները պահպանեն կամ նորերը ստեղծեն, կարողանան խումբ ղեկավարել», - ասաց նա:

Հայրոսյանը հավելեց, որ այս հարցի կարգավորման ուղղությամբ 2020-ին ԱԺ-ի ջանքերով ավելացված բյուջեի շրջանակներում, մի շարք ծրագրերին զուգահեռ իրականացրել են 2 ծրագիր՝ ուղղված երիտասարդ ղեկավար ունեցող խմբերի կայացմանը կամ ամրապնդմանը: «Ունենք 25 նոր խմբեր, որոնք ստանում են բավականաչափ բարձր ֆինանսավորում, սակայն միևնույն է, հարցը պահանջում է համակարգային լուծում», - ասաց նա ու կարևորեց բազային աշխատավարձերի բարձրացումը:

Որպես մյուս խնդիր կոմիտեի ղեկավարը մատնանշեց գիտական ենթակառուցվածքների մասնատվածությունը, մաշվածությունը: Նա կարևորեց գիտական հիմնարկների խոշորացումը:

**Անհրաժեշտ է զարգացած ճարտարագիտություն և գիտություն, ինչը հնարավորություններ է բացում փոքր պետությունների համար**



Արցախյան պատերազմի ընթացքը և սպառազինությունների ոլորտում համաշխարհային զարգացումները ցույց են տալիս, որ ծանր սպառազինությանը զուգահեռ զարգանում ու ավելի վճռական են դառնում թեթև և գիտատար սպառազինությունները: Այս մասին Ազգային ժողովում լսումների ժամանակ ասաց Գիտության կոմիտեի նախագահ Մարգիս Հայոցյանը:

Ըստ նրա՝ այդ սպառազինությունների մշակումն ու կիրառումը այլ մակարդակի հմտություններ ու կարողություններ է պահանջում՝ այսինքն՝ գիտություն: «Այս մրցավազքը նաև հատկանշական է նրանով, որ այդ ոլորտում դերակատարում ունենալու համար պարտադիր չէ ունենալ ծանր գործարանային կարողություններ: Փոխարենն անհրաժեշտ է զարգացած ճարտարագիտություն և գիտություն, ինչը հնարավորություններ է բացում փոքր պետությունների համար այս խաղի մեջ մտնելու և որոշիչ դերակատարում ունենալու համար: Այս մրցավազքին չմասնակցելը կարող է ճակատագրական լինել հատկապես մեզ համար», - ասաց Հայոցյանը:

Ըստ նրա՝ ներկայում Հայաստանում ռազմարդյունաբերության ոլորտում կան մի շարք կայացած հիմնարկներ, կան նաև որոշակի հաջողված նախաձեռնություններ, որոնց կայացման համար անհրաժեշտ է ունենալ զարգացած գիտական համակարգ: Դրան զուգահեռ, պետք է ունենալ գործուն ընթացակարգեր:

Ըստ նրա՝ Գիտության կոմիտեն սերտ աշխատում է Ռազմարդյունաբերության կոմիտեի հետ՝ կարգերի լավարկման ուղղությամբ:

## ՀՀ գիտության պետական կոմիտե. Պետական ծրագրերի շրջանակներում ֆինանսավորում է ստանում 3959 մարդ



2021 թվականի պետական բյուջեով գիտության ֆինանսավորման համար 13 միլիարդ դրամ է նախատեսված, որից աշխատավարձերի համար բազային ֆինանսավորումը 64.4 կկազմի: Այս մասին «Գիտությունը՝ որպես անվտանգության եւ զարգացման հենասյուն» թեմայով խորհրդարանական լսումների ժամանակ ասաց Հայաստանի գիտության պետական կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանը:

Ընդ որում, ինչպես նշեց Հայոցյանը, թեմատիկ ֆինանսավորումը 21.2 տոկոս կկազմի, պետության սպասարկման նպատակային ծրագրերը՝ 1 տոկոս, իսկ մնացած մասը կուղղվի միջազգային պայմանագրերի սպասարկմանը:

Նա նշեց, որ բյուջեից ֆինանսավորվում է 71 պետական գիտական կազմակերպություն, որից 35-ը գործում են Գիտությունների ազգային ակադեմիայի շրջանակներում, 21-ը ԿԳ նախարարության գերատեսչական ինստիտուտներն են, իսկ 12-ը՝ բուհերը:

Միեւնույն ժամանակ, պետական ծրագրերով ֆինանսավորում է ստանում 3959 մարդ, որոնց 63.5 տոկոսը գիտական կոչում ունի: «Միջազգային համագործակցություն կա 134 երկրների եւ միջազգային խոշոր կազմակերպությունների հետ: Երկրում անհրաժեշտ է խթանել միջազգային գիտական հետազոտությունները եւ մշակումները, որոնց իրականացումը Հայաստանը ճանաչելի կդարձնի, իսկ մշակումները՝ հասանելի», - պարզաբանեց Հայոցյանը:

Ընդ որում, նա նշեց, որ Հայաստանը լավ պրոֆեսիոնալ սփյուռք ունի, որը մասնագիտացած է գիտության մեջ: Նրանց ներգրավվածությունը, ըստ Հայոցյանի, ներառված է Պետական կոմիտեի առաջնահերթությունների ցանկում:

**Չպետք է սպասել, որ գիտական աշխարհում որևէ հրաշք տեղի կունենա նման համեստ գումարների դեպքում. նախարար**



Անվտանգությունն սկսվում է կրթությունից, և դա ամենակարևոր մասն է մեր անվտանգության, որը մեր գիտակցության մեջ պետք է ձևավորվի: Մեր միտքը պետք է լինի անվտանգ, մեր գիտակցությունը չպետք է վտանգված լինի: Այս մասին Ազգային ժողովում «Գիտությունը՝ որպես անվտանգության և զարգացման հենասյուն» խորագրով քննարկման ժամանակ ասաց ԿԳՄՄ նախարար Վահրամ Դումանյանը:

«Եթե մեր գիտակցությունը լինի անվտանգ, մենք կլինենք նաև անվտանգ ֆիզիկապես ու ռազմական առումով: Միայն քննարկելը բավարար չէ, այս հարցով պետք է անցնենք ռեալ գործողությունների: Այդ շարքում շուտով օրենքի նախագիծ կքննարկվի: Իրավիճակից դրդված պետք է անհապաղ որոշակի միջոցներ ձեռնարկել, այսպես թողնել չի կարելի: Մի օրինակ բերեմ՝ ինքնաթիռը, որ թռչում է, երբ տուրբուլենտային գոտում է հայտնվում, օդանավի հրամանատարը ավտոկառավարվող ռեժիմից ձեռքի ռեժիմ է վերցնում և դուրս է բերում տուրբուլենտային գոտուց: Եթե որևէ մեկը կասկածում է, թե այն համակարգը, որն օրենքը ուզում է կարգավորել, գտնվում է տուրբուլենտային գոտում, ես պիտի իր հետ չհամաձայնեմ: Ես կարծում եմ՝ շատ էլ ուժեղ տուրբուլենտային գոտում ենք այսօր գտնվում՝ և բարձրագույն կրթության, և գիտության առումով», - ասաց նախարարը:

Դումանյանը նշեց, որ չպետք է սպասել, որ գիտական աշխարհում որևէ հրաշք տեղի կունենա նման համեստ գումարների դեպքում: «Պետք է մտածենք, պետք է այնպես լինի, որ երիտասարդները մնան երկրում, պետք է ձգտում ու մրցակցություն լինի գիտնական դառնալու, դասախոս դառնալու, բուհում աշխատելու: Չունենք այսօր այդ մրցակցությունը», - հավելեց նախարարը:



**Մեկ «Բայրաքթար» ստեղծելու վրա ծախսվել է 270 միլիոն դոլար, որը 10 տարում մեր գիտությանը հատկացված միջոցներն են. ԳԱԱ նախագահ**



Մեկ «Բայրաքթար» ստեղծելու վրա ծախսվել է 270 միլիոն դոլար, որը 10 տարում մեր գիտությանը հատկացված միջոցներն են. ԳԱԱ նախագահ

ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը «Գիտությունը՝ որպես անվտանգության և զարգացման հենասյուն» թեմայով խորհրդարանական լսումների՝ անդրադարձավ գիտության ոլորտի խնդիրներին:

«Հաշվի առնելով 2020-ին մեր կյանքում տեղի ունեցած աղետալի երևույթները՝ պետք է փոխել մեր կյանքի ընթացքը, մեր ամբողջ կյանքը պետք է փոխվի: Ապրել նորովի, չկրկնել նախկինում թույլ տված սխալները հնարավոր է միայն գիտության զարգացման միջոցով: Ապագա գլոբալ մարտահրավերներին դիմակայելու պայմանը զարգացած գիտություն ունենալն է:

44-օրյա պատերազմը շատ մասնագետներ անվանում են հինգերորդ սերնդի պատերազմ:

Պատերազմում մեր զոհերի թվի 90 տոկոսը պայմանավորված էր թշնամու տեխնոլոգիական առավելությամբ: Թուրքիայում գիտությանը հատկացվում է ՀՆԱ-ի 2 տոկոսը: Ասում են, որ մեկ «Բայրաքթար» ստեղծելու վրա ծախսվել է 270 միլիոն դոլար, որը մեր գիտությանը հատկացված միջոցներն են 10 տարվա ընթացքում»,- նշեց Մարտիրոսյանը:

Մարտիրոսյանը նշեց, որ զարգացած գիտության համար պետք է ունենալ անհրաժեշտ ֆինանսավորում, կադրային ներուժ, բարձր մակարդակի միջազգային համագործակցություն և գիտական բարձր մակարդակին համապատասխանող պետական պատվեր:

ԳԱԱ նախագահը նշեց, որ երկար տարիներ՝ 1991-ից մինչ օրս, գիտությանը հատկացված միջոցները կազմում են ՀՆԱ-ի 0.25 տոկոսը, որը ոչ թե օգնել է ֆինանսավորել ու զարգացնել գիտությունը, այլ պահպանել է գիտական կազմակերպությունները, որոնք սովետական տարիներին զբաղվել են գիտությամբ: Գիտաշխատողների միջին աշխատավարձը 100 հազար դրամ է, որը մեր երկրի միջին աշխատավարձի կեսն է կազմում: ԳԱԱ աշխատակիցների 2/3-ը ստանում է մինիմալ աշխատավարձ:

FacebookTwitterԱվելին...

## 270 մլն դոլար. մեկ «Բայրաքթար» կամ վերջին 10 տարում Հայաստանի գիտությանն ուղղված գումար

Ոչ թե քննիչ հանձնաժողով, այլ պարզապես՝ խորհրդարանական լսումների ձևաչափ և ոչ թե կասկածների ու մտահոգությունների քննարկում, այլ՝ հետագա անելիքների: Այս աշխատանքներն էին այսօր խորհրդարան բերել բազմաթիվ մասնագետների: Արցախյան երկրորդ պատերազմը՝ գիտության և կրթության ոլորտի առջև հետևություններ անելու խնդիր է դրել: Խոշորացույցի տակ է ռազմարդյունաբերությունը: Բայց նախ՝ պետք է հասկանալ առաջ շարժվելու ճիշտ ուղղությունը:

Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյան. «Մերը պետք է մեկ քայլ առաջ լինի: Վաղվա պատերազմը, որը պարտադրված կարող է լինել, լինելու է հեռահար, հեռահար կառավարվող, բայց հստակ ոգեղեն զինվորով, ոչ անտարբեր հրամկազմով, և մեր առաջնահերթությունները պետք է հենված լինեն այդ կարողությունների միասնականության վրա: Գիտությունը դրա մեջ պետք է լինի առաջատար ուժը»:



Արցախյան երկրորդ պատերազմի դասերից մեկն այն է, որ ծանր սպառազինությանը զուգահեռ զարգանում և որոշիչ են դառնում թեթև և գիտատար սպառազինություններն ու տեխնոլոգիաները: Խնդրի վրա ուշադրություն է հրավիրում Հայաստանի գիտական կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանը: Այս խնդիրը պահանջում է այլ մակարդակի հմտություններ և կարողություններ. խոշոր գործարանների փոխարեն՝ զարգացած գիտություն ու գիտատար արդյունաբերություն:

«Մա հնարավորություններ է բացում փոքր պետությունների համար, այս խաղի մեջ մտնելու նպատակով և որոշ դերակատարում ունենալու համար: Այս մրցավազքին չմասնակցելը կարող է ճակատագրական լինել հատկապես մեզ համար: Պետք է նաև հասկանանք, որ ապագայի պատերազմը և անվտանգային մարտահրավերները կարող են տրամագծորեն տարբերվել նրանից, ինչը մենք տեսանք: Այդ ուղղությամբ ևս աշխատանքներ պետք է տարվեն՝ դրանց բնույթը կանխատեսելու և դրանց նախապատրաստվելու ուղղությամբ», - ասաց Հայաստանի գիտական կոմիտեի նախագահը:

Մեր ներուժը կարող է դա ապահովել՝ աշխատանքները ճիշտ կազմակերպելու դեպքում:  
Դիտարկվում է Սփյուռքի մասնագետների ներգրավվածության անհրաժեշտությունը, քանի որ Հայաստանի գիտությունն այժմ համարվում է ծերացող: ԱԺ-ի կրթության և գիտության հարցերի մշտական հանձնաժողովի փոխնախագահ Հովհաննես Հովհաննիսյանը նույն «Բայրաքթար»-ի օրինակն է բերում: Անօդաչու թռչող սարքը իր տեսակի մեջ լավագույնը չէ, բայց այս պատերազմում վճռորոշ դերակատարում ունեցավ: Իրականում, այս ԱԺՍ-ի մասերից ոչ մեկը Թուրքիայում չի արտադրվել:



«Մի փոքր հետազոտություն անելու պարագայում կտեսնեք, որ մենք ունենք տարբեր երկրներում, անուններ հիմա չեմ ուզում հնչեցնել, նույն «Բայրաքթար»-ի մասերի վրա աշխատող գիտնական-ինժեներներ, որոնք աշխատել և արդյունք են ստեղծել: Այսինքն՝ իրենք իրենց աշխատանքն են արել: Այդ տեսանկյունից Գիտության պետական կոմիտեն անելիք ունի, որպեսզի այդ ներուժը մենք կարողանանք բերել: Պետք չէ այդ մարդիկ գան Հայաստան, նրանք կարող են մնալ իրենց տեղերում, բայց ստեղծեն «դպրոցներ» և դրանց միջոցով իրենց գիտելիքները փոխանցեն երիտասարդ սերնդին և փորձեն համագործակցության տարբեր մեխանիզմների միջոցով գալ ինչ-որ լուծումների»:

Արդեն խմբավորված խնդիրներից կարևորագույնը կրթության և գիտության ոլորտի ֆինանսավորումն է: Մեկ «Բայրաքթար» ստեղծելու վրա ծախսվում է 270 միլիոն դոլար, այդքան գումար 10 տարում հատկացվել է Հայաստանի գիտությանը:

Ռոբոտաշինության ինժեներ, «Ռոբոմարտ» ընկերության համահիմնադիր Տիգրան Շահվերդյանը ոչ թե վերացական ծրագրերի, այլ շոշափելի և արդեն հանդիպած խնդիրների մասին է խոսում .

«Հայաստանում այս պահին չկա կառավարման համակարգերով զբաղվող գոնե մեկ առաջադեմ գիտական խումբ, որի հետ ավտոմատ համակարգեր, մասնավորապես՝ ԱԺՍ-ներ նախագծող ընկերությունները կարող են համագործակցել: Այն բոլոր տեխնոլոգիական հաջողությունները, որ անկախ Հայաստանում գրանցվել են մինչև այսօր, խորհրդային հզոր գիտության հետևանքն են: Բայց վերջին 30 տարվա ընթացքում այդ կարևորագույն ենթակառուցվածքը միայն քամել ենք և շարունակում ենք քամել: Գիտության զարգացման ծրագրերը եղել են ու կան, բայց անհայտ պատճառներով այդ ծրագրերի մեջ ներդրումներ չեն արվում»:



«Եթե 2000-ականներին այսպիսի քննարկում ունենայինք և ճիշտ ուղղությամբ գնայինք, հիմա անվտանգություն կունենայինք». սա արդեն գիտության կոմիտեի նախկին ղեկավար Սմբատ Գոգյանի կարծիքն է: Քննարկումից բացի, սակայն, կարևոր է ելույթներից հետևություններ անելը, դրանցից իրական աշխատանքի անցնելն ու արդյունքի վերածելը: